

**ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐՔԵՉԱՆՈՒՄ ԵՎ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԽՆԴԻՐԸ**

*Միքայել Չոյան*

Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության պատճառների ուսումնասիրության տեսակետից կարևորագույն նշանակություն ունեն այն գործընթացները, որոնք, պայմանավորված լինելով խորհրդային ազգային քաղաքականության առանձնահատկություններով, նպաստավոր պայմաններ ստեղծեցին Լեռնային Ղարաբաղում հակամարտության առաջացման համար: Հնդվածում, մասնավորապես, հատուկ ուշադրություն է դարձվել Ադրբեջանական ԽՍՀ տարածքում խորհրդային ազգային քաղաքականության իրականացման առանձնահատկություններին:

Խորհրդային ազգային քաղաքականությունը քննարկելիս անհրաժեշտ է ձեռնպահ մնալ ծայրահեղ և պարզունակ մոտեցումներից: Մի կողմից, խորհրդային պետական քարոզչական մեքենան պնդում էր, որ Խորհրդային Միությունը մի պետություն է, որտեղ բոլոր ժողովուրդները հավասար են, որտեղ լուծված է ազգային հարցը, և որտեղ իրականություն են դարձել սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության սկզբունքները: Մյուս կողմից, թե՛ Խորհրդային Միությունում, թե՛ նրա սահմաններից դուրս ԽՍՀՄ-ը շատերին ներկայանում էր իբրև կայսրություն, որի տիրապետող էթնոսը ռուսներն էին, իսկ մնացած էթնոսները հանդես էին գալիս կայսրության ճնշվող և շահագործվող հպատակների դերում: Երկու պատկերացումներն էլ որոշակի հիմքեր ունեին օբյեկտիվ իրականության մեջ, սակայն երկուսն էլ բավական պարզեցված և, կարելի է ասել, առասպելականացված էին: Իրականությունն այդքան պարզ ու միանշանակ չէր, այլ շատ ավելի բարդ և հակասական:

Խորհրդային Միության վարչատարածքային համակարգը կառուցված էր ստորակարգային սկզբունքով, ընդ որում՝ բուրգի գազաթին գտնվում էր միութենական կենտրոնը, հաջորդ աստիճանը զբաղեցնում էին միութենական հանրապետությունները: Հաջորդ ավելի ցածր աստիճանների կանգնած էին ինքնավար միավորները՝ ինքնավար հանրապետությունները, ինք-

նավար մարզերը և ինքնավար օկրուգները: Վերջապես, կային էթնիկ հանրություններ, որոնք չունեին որևէ ազգային-տարածքային միավոր:

Թեև հանրապետություններն ամբողջապես գտնվում էին կենտրոնի վերահսկողության տակ, սակայն օժտված էին անկախ պետությունների որոշ հատկանիշներով և գործառույթներով: Յուրաքանչյուր միութենական հանրապետություն յուրահատուկ սաղմնային ազգային պետություն էր՝ սահմանափակ իրավունքներով: Ճիշտ է, առավել կարևոր քաղաքական և տնտեսական հարցերը ցանկացած հանրապետության համար, ի վերջո, որոշվում էին կենտրոնի կողմից և հանրապետական ղեկավարությունը երբևէ չէր կարող հակադրվել վերնից եկող հրամաններին, սակայն կային շատ հարցեր, որոնցում հանրապետություններն, ըստ էության, կարող էին ինքնուրույն քաղաքականություն վարել: Բացի այդ, ամեն կերպ շեշտվում էր, որ հանրապետությունները, վարչական միավորներ լինելով հանդերձ, միաժամանակ նաև ազգային պետական կազմավորումներ են, և յուրաքանչյուր միութենական հանրապետություն կապվում էր մի որոշակի էթնիկ հանրության՝ այսպես կոչված «տիտղոսային» էթնոսի հետ [1, 2, 3]:

Ըստ էության, յուրաքանչյուր հանրապետությունում իշխանությունը պատկանում էր տիտղոսային էթնոսի շարքերից դուրս եկած վերնախավին: Թեև ազգայնականության բացահայտ դրսևորումները ԽՍՀՄ-ում խստորեն դատապարտվում և պատժվում էին, սակայն որոշ հանրապետություններում պետական քաղաքականությունը, փաստորեն, ուղղված էր հանրապետության ներսում տիտղոսային էթնոսի համախմբմանը (կոնսոլիդացիային) և նրա դիրքերի ամրապնդմանը: Հիմնվելով հանրապետության էթնիկ մեծամասնության շահերի վրա՝ այդ քաղաքականությունը հաճախ կարող էր ուղղվել հանրապետության ազգային փոքրամասնությունների դեմ, ստանալ խտրական և ձուլողական ուղղվածություն: Կենտրոնի կողմից տարվող ազգային քաղաքականությունը որոշ դեպքերում ոչ միայն չէր խոչընդոտում ազգային վերնախավի կողմից նման քաղաքականության անցկացմանը, այլև կամա թե ակամա նպաստում էր ազգային փոքրամասնությունների ձուլմանը [տե՛ս 1, 2]:

Խորհրդային ազգային քաղաքականության արմատները տանում են դեպի 20-րդ դ. սկիզբ, երբ Ռուսաստանում գործող կուսակցությունները և, մասնավորապես, բոլշևիկները իրենց վերաբերմունքն էին ձևավորում Ռուսաստանյան կայսրության առջև ծառայած ազգային հարցի նկատմամբ: Այդ շրջանում Եվրոպայում, մասնավորապես՝ ձախ կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերի շրջանակներում, լայն տարածում ունեին ազգային ինքնորոշման և բազմազգ պետություններում ազգային ինքնավարության գաղափարները: Ահա այդ գաղափարների ազդեցության տակ էլ ձևավոր-

վեց բոլշևիկների ծրագիրն ազգային հարցում [3, pp. 8-22]:

1917թ. հոկտեմբերյան իրադարձություններից հետո իշխանության համար սկսված պայքարի պայմաններում բոլշևիկները շարունակում էին հանդես գալ ազգային ինքնորոշման և ազգային ինքնավարության կարգախոսներով: Այդ առումով բոլշևիկները սկզբունքորեն տարբերվում էին իրենց հիմնական հակառակորդներից, որոնք հանդես էին գալիս «միասնական և անբաժանելի Ռուսաստանի» օգտին՝ հրաժարվելով Ռուսաստանի կայսրության ոչ ուս էթնիկ հանրությունների հարցում որևէ զիջում անելուց: Իշխանությունը գրավելուց մի քանի օր անց՝ 1917թ. նոյեմբերի 2-ին, բոլշևիկները հրապարակեցին «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագիր»: Այն պարունակում էր հետևյալ սկզբունքները.

1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարություն և ինքնիշխանություն,
2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունք, ընդհուպ մինչև անջատում և ինքնուրույն պետությունների ստեղծում,
3. բոլոր ազգային և ազգակրոնական արտոնությունների և սահմանափակումների վերացում,
4. Ռուսաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգագրական (*этнографические*) խմբերի ազատ զարգացում [1, с. 14]:

Այսպիսին էր բոլշևիկների պաշտոնական տեսակետն ազգային հարցի վերաբերյալ: Բոլշևիկների ազգային քաղաքականությունն իրականում միայն մասամբ էր համապատասխանում այդ սկզբունքներին: Արդեն իսկ Քաղաքացիական պատերազմի տարիներից սկսած՝ բոլշևիկների ազգային քաղաքականությունն աչքի էր ընկնում ոչ միայն անհետևողականությամբ և երկակի չափանիշներով (բավական է հիշել, թե ինչպես էին գծվում խորհրդային հանրապետությունների սահմաններն Անդրկովկասում), այլև ներքին խոր հակասություններով:

Բոլշևիկները մի կողմից հայտարարում էին, որ ազգային հարցի լուծումն ազգային ինքնորոշումն է և ազգային ինքնուրույն պետական միավորների ստեղծումը, մյուս կողմից՝ ամեն ինչ անում էին Ռուսաստանյան կայսրությունը նոր անվան տակ վերականգնելու և ոչ ուս ժողովուրդների ազգային շարժումները ճնշելու համար: Այսպես, չնայած տեսականորեն բոլշևիկները կողմ էին ազգերի ինքնորոշմանը՝ ընդհուպ մինչև անկախություն, Կարմիր բանակը «սպիտակներին» պարտության մատնելուց հետո վերացրեց նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքում ձևավորված գրեթե բոլոր ազգային պետությունները, բացառությամբ Մերձբալթյան պետությունների:

Բոլշևիկյան ազգային քաղաքականության այս առանձնահատկությունները շարունակում էին դրսևորվել նաև Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո՝ ԽՍՀՄ ձևավորման տարիներին: Բոլշևիկներն ամեն ինչ անում էին, որ 1917-1918թթ. ազգային շարժումների զարթոնքն այլևս չկրկնվեր. պայքար էր տարվում այսպես կոչված «բուրժուական ազգայնականության», այսինքն՝ ազգային անկախության կողմնակիցների դեմ: Քաղաքականապես ոչ հուսալի մտավորականների զանգվածային բռնաճնշումների հետևանքն այն եղավ, որ տասնամյակների ընթացքում ազգային անկախության հարցի մասին բացահայտորեն խոսելն անգամ վտանգավոր էր: Արդեն 1920-ականների սկզբին «ազգայնականության» մեղադրանքը բավարար էր, որ անգամ կոմունիստական գործիչները ոչ ռուսական հանրապետություններում հեռացվեին պաշտոններից և ենթարկվեին հետապնդումների [1, c. 21]: Հետագայում՝ ստալինյան բռնատիրության տարիներին, իրական և կարծեցյալ «ազգայնականների» բռնաճնշումներն աննախադեպ ծավալներ ընդունեցին:

Այնուամենայնիվ, ազգային շարժումների ճնշումը բոլշևիկյան ազգային քաղաքականության միայն մեկ կողմն էր: Որքան էլ հակասական է, բոլշևիկները, ճնշելով ազգային շարժումները, միաժամանակ յուրացրին այդ շարժումների որոշ ծրագրային դրույթներ: Ճիշտ է, նրանք չէին ուզում և չէին կարող բավարարել ազգային շարժումների հիմնական պահանջը՝ լիակատար անկախ ազգային պետականության ստեղծումը, սակայն փորձ արեցին համատեղել անհամատեղելի՝ նոր անվան տակ պահպանել Ռուսաստանյան կայսրությունը՝ միաժամանակ բավարարելով ազգային ինքնորոշման ձգտումները: Արդյունքում ծնվեց այն հայեցակարգը, ըստ որի՝ ազգային ինքնորոշման իրավունքը կարող է իրականացվել մեկ միասնական պետության սահմաններում, ընդ որում՝ այդ պետությունը պետք է բաղկացած լինի «ազգային պետություններից»: Այս սկզբունքը՝ «սոցիալիստական ֆեդերալիզմը», որը հիմնվում է ազգային-պետական միավորների վրա, հակադրվում էր «բուրժուական ֆեդերալիզմին», որը հիմնվում է վարչատարածքային միավորների վրա [տե՛ս՝ 1, 3, 4]:

Փաստորեն, խորհրդային ազգային քաղաքականության հիմքում դրվեց էթնոտարածքային սկզբունքը. յուրաքանչյուր էթնիկ հանրություն պետք է ունենար իր վարչական միավորը, որի սահմանները պետք է համապատասխանեին տվյալ էթնիկ հանրության բնակչության սահմաններին: Ստեղծվեցին տարբեր մակարդակի ազգային-վարչական միավորներ՝ սկսած ազգային միութենական հանրապետություններից մինչև ազգային ինքնավար օկրուգներ և շրջաններ: Անշուշտ, իրականությունը միշտ չէ, որ համապատասխանում էր հռչակված սկզբունքներին. հատկապես շատ

ինդիքներ էին ծագում ազգային միավորների սահմանները որոշելիս: Նախնառաջ շատ էին այնպիսի տարածքները, որոնք ունեին բնակչության խառն էթնիկ կազմ, բացի այդ, վարչական միավորների սահմանները գծելիս մեծ դեր էին խաղում քաղաքական նկատառումները, այս կամ այն էթնոսները ներկայացնող կոմունիստների ճնշումները, վերջապես՝ առաջնորդների անձնական նախապատվությունները: Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցին տրված լուծումն այս ամենի առավել վառ օրինակներից մեկն է: Նմանատիպ գործընթացներ էին տեղի ունենում նաև ԽՍՀՄ այլ մասերում: ԽՍՀՄ ազգային-պետական միավորների կազմավորման պատմությունը լի է նման օրինակներով [1, c. 17-18]:

ԽՍՀՄ էթնոտարածքային բաժանումը նպաստավոր պայմաններ էր ստեղծում բնակչության այնպիսի խմբերի համար, որոնց ազգային ինքնագիտակցությունը մինչև ԽՍՀՄ կազմավորումը թույլ էր արտահայտված կամ գրեթե բացակայում էր: Այն սկսեց ձեռք բերել մինչ այդ չունեցած կարևորություն: Բիարկե, կային այնպիսի ազգային հանրապետություններ, որոնց տիտղոսային էթնոսների շրջանակներում գոյություն ուներ բավական զարգացած ազգային ինքնագիտակցություն: Մակայն կային բնակչության այնպիսի խմբեր, որոնց համար նախկինում առաջնահերթ էր ոչ թե էթնիկ, այլ կրոնական կամ տարածքային ինքնագիտակցությունը: Առավել ևս այդպիսի խմբերի վերաբերմամբ մինչև ԽՍՀՄ ձևավորումն անհնարին էր խոսել էթնիկ ինքնագիտակցության հիման վրա ձևավորվող ազգային ինքնագիտակցության մասին: Այսպիսի խմբերի բնակչության շրջանում խորհրդային ազգային քաղաքականությունը մեծապես նպաստեց ազգային համախմբմանը և ազգային ինքնագիտակցության ձևավորմանը [ավելի մանրամասն տե՛ս 1, 2, 4, 5]:

Նկարագրված գործընթացների վառ օրինակ էր Խորհրդային Ադրբեջանը: Ադրբեջանական ազգի ձևավորման գործընթացը հեռու էր ավարտից, երբ, Ռուսաստանյան կայսրության փլուզումից հետո՝ 1918թ., ստեղծվեց Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետությունը: Այդ գործընթացը շարունակվում էր ամբողջ խորհրդային ժամանակաշրջանի ընթացքում և որոշ առումներով ավարտված չէ նաև այսօր: Դրա արտահայտություններից մեկն այն էր, որ խորհրդային և հետխորհրդային տարիներին ադրբեջանական քաղաքական և մտավորական վերնախավը նպատակաուղղված աշխատանք էր կատարում ադրբեջանցիների շրջանում ազգային պատմության որոշակի պատկերացումներ ձևավորելու նպատակով:

ԽՍՀՄ գոյության տարիներին ինքնագիտակցության այն ձևերը, որոնք առաջնային էին Արևելյան Անդրկովկասի թյուրքալեզու բնակչության համար, մասնավորապես՝ կրոնական, ցեղային և տարածքային

ինքնագիտակցությունը, աստիճանաբար իրենց առաջնային տեղը զիջում են ձևավորվող ազգային ինքնագիտակցությանը: Ազգային ինքնագիտակցության ձևավորմանը նպաստում էին այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական առաջընթացը, ինդուստրիալացումը, ուրբանիզացումը, կրթական մակարդակի բարձրացումը, աշխարհականացումը (սեկուլարիզացիան), մի խոսքով՝ այն ամենը, ինչ ընդհանուր առմամբ կարելի է կոչել «հասարակության արդիականացում» (մոդեռնիզացիա)<sup>1</sup>:

Ադրբեջանի խորհրդայնացման պահից բոլշևիկները հատուկ վերաբերմունք ցուցաբերեցին Անդրկովկասի թյուրքական ազգայնական քաղաքական ուժերի հանդեպ: Իհարկե, ինչպես և այլ դեպքերում, բոլշևիկների հաստատումը Ադրբեջանում ուղեկցվում էր նախորդ վարչակարգի ներկայացուցիչների նկատմամբ բռնություններով՝ տվյալ դեպքում Մուսավաթ կուսակցության հանդեպ: Այնուամենայնիվ, բավական խոսուն է հետևյալ փաստը. երբ Մուսավաթի առաջնորդներից մեկը՝ Ռասուլզադեն, ձերբակալվեց, Մտալինը, որը 1920թ. վերջին գտնվում էր Ադրբեջանում, ոչ միայն անձամբ այցելեց Ռասուլզադեին, այլև նրան ազատ արձակելու հրաման տվեց [8, c. 29]:

Իր ազգայնական դիրքորոշումներով աչքի էր ընկնում Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը: Ընդ որում՝ այդ միտումը զգալի էր այն պահից, երբ հիմնադրվեց թաթարական սոցիալ-դեմոկրատական «Հիմմեթ» կազմակերպությունը: Ամերիկացի ուսումնասիրող Բ.Շաֆերը բերում է մի շարք փաստեր, որոնք բացահայտում են «Հիմմեթի» և նրան հետևած Ադրբեջանի կոմունիստական կուսակցության ազգայնական բնույթը, որով թաթար բոլշևիկների կազմակերպությունը տարբերվում էր նմանատիպ այլ կազմակերպություններից: Այսպես, 1904թ., երբ հիմնադրվեց «Հիմմեթը», Լենինի համաձայնությամբ կազմակերպության անդամությունը սահմանափակվեց մահմեդականներով, այսինքն՝ հիմնականում կովկասյան թաթարներով, և կազմակերպությունը, փաստորեն, ստացավ էթնիկ բնույթ, մինչդեռ, օրինակ, հրեական «Բունդը» նման արտոնություն չստացավ: Այս սահմանափակումն ուժի մեջ էր նաև Ադրբեջանի անկախության տարիներին: Սա տեղի էր ունենում այն պայմաններում, երբ, Բ.Շաֆերի խոսքերով, «ադրբեջանական բանվորները ռուս կամ հայ բանվորների հետ դասակարգային միաբանության և համագործակցության քիչ նշաններ էին ցույց տալիս» [9, p. 34]:

Ինչպես նշում է Բ.Շաֆերը, «ադրբեջանական ձախ ուժերի ազգայնա-

<sup>1</sup> Արդիականացման և ազգայնականության կապերի մասին բավական շատ է խոսվել գրականության մեջ, մասնավորապես ազգայնականության առավել հայտնի ուսումնասիրողներից մեկի՝ Բ.Գելների կողմից [6, 7]:

կան բնույթի վկայությունն է նաև այն գործունեությունը, որ ծավալել էին նրա որոշ մասնակիցներ, ինչպես, օրինակ, Նարիման Նարիմանովը...»: Հեղափոխությունից առաջ Ն.Նարիմանովը պայքարում էր ադրբեջանական թաթարների լեզվական իրավունքների համար: Հետագայում, դառնալով Խորհրդային Ադրբեջանի կառավարության նախագահ, նա պնդում էր, որ Ադրբեջանը պետք է անկախ լինի, քանի որ այդպիսով օրինակ կծառայի մահմեդական այլ երկրների համար [9, քր. 34-35]:

Այս ամենը հաշվի առնելով՝ զարմանալի չէ, որ խորհրդային իշխանության առաջին տարիներին Ադրբեջանի թյուրքերի շրջանում խրախուսվում էր ազգային ինքնագիտակցության և ազգային մշակույթի զարգացումը: Բնարկե, նմանօրինակ ազգային քաղաքականություն վարվում էր նաև մի շարք այլ ոչ ռուսական հանրապետություններում: 1920-ական թվականները ԽՍՀՄ պատմության մեջ նշանավորվեցին, այսպես կոչված, «կորենիզացիայի» կամպանիայով: Նեղ իմաստով «կորենիզացիա» նշանակում էր ոչ ռուսական, «բնիկ» (*коренной*) ազգությունների ներկայացուցիչների ընդգրկում իշխանության մարմիններում և հասարակական կյանքի համար կարևոր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք էին կրթությունը, գիտությունը, արվեստը և այլն: Լայն առումով «կորենիզացիան» ներառում էր նաև ազգային լեզուների զարգացումը և այդ լեզուներով գրագիտության բարձրացումը, ազգային կրթության համակարգերի ձևավորումը, ընհանուր առմամբ՝ ազգային մշակույթների զարգացումը [տե՛ս 1, 2]:

Ընդհանուր առմամբ, «կորենիզացիան» յուրահատուկ փոխզիջում էր բոլշևիկների կենտրոնամետ ձգտումների և ԽՍՀՄ ոչ ռուս ժողովուրդների ազգային ձգտումների միջև: Բոլշևիկները ձգտում էին ցույց տալ, որ խորհրդային իշխանություններն արտահայտում են ոչ միայն ռուսների, այլև ԽՍՀՄ մյուս բոլոր ժողովուրդների շահերը: Ստալինն այսպես էր բացատրում «կորենիզացիայի» քաղաքականության իմաստը. «Մենք հնարավորություն կստանանք խորհրդային իշխանությունը ռուսականից դարձնել ազգամիջյան (*международная*), բոլոր հանրապետությունների աշխատավոր զանգվածների համար հարազատ, հասկանալի, մտերիմ, հատկապես այն հանրապետություններում, որոնք հետ են մնացել տնտեսական և մշակութային առումներով» [10, շ. 263]:

Թյուրքական բնակչություն ունեցող հանրապետություններում Մոսկվան քաջալերում էր ուրույն ազգային ինքնագիտակցության զարգացումը համընդհանուր թյուրքական ինքնագիտակցության հաշվին: Այդ քաղաքականությունը բացատրվում էր նրանով, որ խորհրդային իշխանությունները հասկանում էին, որ միասնական թյուրքական ինքնագիտակցությունը պարարտ հիմք է պանթյուրքիստական շարժումների համար: Բացառված չէ,

որ խորհրդային ազգային քաղաքականության այս առանձնահատկության հետ էր կապված Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը կազմող էթնոսի անվան փոփոխությունը: Ինչպես նշեցինք, 1918թ. «ադրբեջանցի» ասելով հասկանում էին Ադրբեջանի բոլոր բնակիչներին, անկախ էթնիկ պատկանելությունից, իսկ էթնիկ պատկանելություն նշելու համար օգտագործվում էր «ադրբեջանցի թյուրքեր» անվանումը: Այս անունների օգտագործումը հիմնականում պահպանվեց 1920-ական թթ. և իր արտահայտությունը գտավ նաև մարդահամարի տվյալներում: 1930-ական թթ. իբրև էթնանուն սկսեց օգտագործվել «ադրբեջանցիներ» տերմինը, որը փոխարինեց «թյուրքեր» էթնանվանը [8, c. 35]:

«*Կորենիզացիայի*» գործընթացն Ադրբեջանում առավել կարևոր հետևանքներ ունեցավ: Այստեղ շատ կարևոր ոլորտներում, օրինակ՝ պետական և կուսակցական ակտիվում, դպրոցի և բարձրագույն հաստատությունների ուսուցիչների և դասախոսների շրջանում դեռևս 1920-ական թթ. սկզբին մեծ տոկոս էին կազմում ոչ ադրբեջանական էթնիկ ծագում ունեցողները՝ հատկապես ռուսները և հայերը: Ազգությամբ ոչ ադրբեջանցի առանձին գործիչներ բարձր դիրքեր էին գրավում Ադրբեջանի կոմկուսի ղեկավարության մեջ [11, pp. 122-123]: «*Կորենիզացիայի*» արդյունքում իրադրությունը սկզբունքորեն փոխվեց: Այսպես, արդեն 1930թ. Ադրբեջանի համալսարաններում ուսանողների 70%-ը և աշխատող դասախոսների երեք քառորդը ադրբեջանցի թյուրքեր էին [8, c. 31; 5, pp. 102-106]: Այս իրադրությունը Ադրբեջանի բարձրագույն կրթության ոլորտի համար յուրահատուկ խնդիրներ էր ծնում: Հետաքրքիր է բարձրագույն կրթության ոլորտի մի աշխատակցի վկայությունը, որը գրում էր, թե «ռուս դասախոսը ստիպված է ազգությամբ թյուրք ուսանողների մեջ փնտրել մեկին, որը կկարողանա փոխարինել իրեն... սակայն օբյեկտիվ պատճառներով այդ ազգության ուսանողները ինտելեկտուալ զարգացման շատ ցածր մակարդակ ունեն» [8, c. 31]:

Խորհրդային տարիներին տեղի էր ունենում ադրբեջանական ազգային մշակույթի ձևավորման բուռն գործընթաց: Մինչև 19-րդ դ. Արևելյան Անդրկովկասի թյուրքական ծագում և խոսակցական թյուրքական լեզու ունեցող բնակչության համար հիմնական գրավոր լեզուներն էին արաբերենը և պարսկերենը: 19-րդ դ. կեսերին կովկասյան թյուրքերին ներկայացնող մի շարք մտավորականներ սկսում են գրական լեզու մշակել [12; 9, pp., 29-30, 33-34; 13, pp. 81-82]: Մակայն այդ նոր գրական լեզուն տարածված էր միայն մտավորականների, ազնվականության և բուրժուազիայի նեղ շրջանակներում, ընդ որում՝ չկային այդ լեզվի միասնական կանոններ. ոմանք օգտագործում էին օսմաներենի կանոնները և կովկասյան թյուրքերի լեզուն



չէին առանձնացնում օսմաներեն գրական լեզվից, ոմանք, ընդհակառակը, փորձում էին այդ գրական լեզուն մոտեցնել կովկասյան թյուրքերի խոսակցականին [9, pp. 29-30, 33-34]:

Իրավիճակը սկզբունքորեն այլ էր խորհրդային տարիներին: Նախևառաջ ադրբեջաներենը պաշտոնապես առանձին լեզվի կարգավիճակ ստացավ, մշակվեցին այդ լեզվի քերականությունը, բառապաշարը և այլն: 1924թ. տեղի ունեցավ Ադրբեջանում այբուբենի բարեփոխումը (առաջինը 20-րդ դ. ընթացքում), որն իր հերթին նպաստեց անգրագիտության հաղթահարմանը: Ընդունվեց օրենք պարտադիր դպրոցական կրթության մասին: Անգրագիտության դեմ ծավալված պայքարի արդյունքում՝ 1926թ. Ադրբեջանի բնակչության մեկ քառորդը, իսկ 1930թ. կեսն արդեն գրագետ էր [8, c. 32]: Այսպիսով, Արևելյան Անդրկովկասի թյուրքերի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց ընդհանուր պարտադիր կրթության համակարգ, ընդ որում, այդ համակարգի լեզուն ադրբեջանցի թյուրքերի խոսակցական լեզուն էր: Այս հանգամանքը չէր կարող չունենալ որոշիչ դեր ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացում:

«Կորենիզացիայի» քաղաքականության մաս էր կազմում նաև ազգային հանրապետություններում «ազգային գիտության» և տիտղոսային էթնոսին պատկանող գիտական ընտրախավի ստեղծումը: Մասնավորապես, մեծ ուշադրություն էր դարձվում հանրապետության պատմությունը գրելու խնդրին, ընդ որում՝ այդ պատմությունը պետք է գրվեր տիտղոսային էթնոսի դիրքերից: 1930-ականներից սկսեց դրվել ադրբեջանական պատմագիտության ինստիտուցիոնալ հիմքը. 1934թ. հիմնադրվեց Ադրբեջանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, իսկ 1940-1941թթ. ստեղծվեց Ադրբեջանի պատմության ամբիոնը: Սկսեցին հրատարակվել նաև Ադրբեջանի պատմության դասագրքեր, առաջինը՝ 1939թ., իսկ երկրորդը՝ 1941թ. [13, pp. 103-104]: Ադրբեջանական պատմաբանների առջև խնդիր դրվեց ստեղծել Ադրբեջանի պատմություն, մի հասկացություն, որն անպատկերացնելի էր մինչև 1918թ.:

1920-ական թթ. վերջին, 1930-ական թթ. սկզբին «կորենիզացիայի» տեմպերը դանդաղեցին, և Մոսկվան սկսեց քննադատել «կորենիզացիայի ծայրահեղությունները»: Սկսեցին մասամբ վերականգնվել ռուս բնակչության դիրքերը ոչ ռուսական հանրապետություններում: Սկսեց վերիմաստավորվել ռուսների դերը ԽՍՀՄ-ում. ռուսներն աստիճանաբար սկսում էին ընկալվել իբրև «առաջինը հավասարների մեջ», մի գործընթաց, որն առավել վառ բնույթ ստացավ Երկրորդ աշխարհամարտի տարիներին և դրանից անմիջապես հետո: Փոխվում էր նաև վերաբերմունքը ռուսերենի և ոչ ռուսերեն լեզուների հարաբերակցության հանդեպ [այդ նոր միտումների մասին տե՛ս 1, 2]:

Այս միտման դրսևորումներից մեկն այն էր, որ մի շարք լատինատառ այբուբեններ, որոնք ստեղծվել էին «կորենիզացիայի» տարիներին, փոխարինվեցին կիրիլիկ (կյուրեղյան) այբուբեններով. Ադրբեջանում դա տեղի ունեցավ 1940թ. հունվարին [11, p. 124]: Հարկ է նշել, որ Ադրբեջանում այբուբենի փոփոխությունն առանձնահատուկ նշանակություն ուներ. դա կապված էր այն հանգամանքի հետ, որ 1928թ. Թուրքիայում ևս այբուբենի բարեփոխում կատարվեց և թուրքերենն ստացավ լատինատառ այբուբեն: Ադրբեջանում կիրիլիկ այբուբեն մտցնելը նպաստեց, որ Ադրբեջանի թյուրքերի և Թուրքիայի թուրքերի լեզուների միջև եղած տարբերությունները մեծանան, և այդպիսով նաև ավելի ամրապնդվի Ադրբեջանի թյուրքերի՝ իբրև առանձին ազգային միավորի, ազգային ինքնագիտակցությունը [8, c. 32]:

Հետագայում խորհրդային ազգային քաղաքականությունը բնորոշվում էր տատանումներով և խեղաթյուրումներով, ընդհուպ մինչև էթնոտարածքային միավորների վերացում և ամբողջական էթնոսների տեղահանում իրենց պատմական տարածքներից [տե՛ս 14]: Չնայած դրան՝ ԽՍՀՄ առաջին տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը հիմնականում նույնը մնաց: Ժամանակ առ ժամանակ ԽՍՀՄ կառավարությունը փորձում էր սահմանափակել ոչ ռուս լեզուների օգտագործումը և, հակառակը, ընդլայնել ռուսերենի օգտագործման շրջանակները: Խրուշչովի օրոք խոսվում էր խորհրդային ազգությունների «միաձուլման» (*слияние*) մասին, իսկ 1970-ական թթ. հայտարարվեց նաև նոր հանրության՝ «խորհրդային ժողովրդի» առաջացման մասին [4, p. 9]:

Այնուամենայնիվ, պահպանվեցին այն հիմքերը, որոնց վրա տեղի էր ունենում ազգային ինքնագիտակցության պահպանումը, որոշ դեպքերում՝ նաև առաջացումը և ձևավորումը: Պահպանվեցին ազգային հանրապետությունները, որոշ հանրապետություններում իշխանության մարմինները վերահսկող տիտղոսային էթնոսին պատկանող քաղաքական վերնախավը, ազգային լեզվի վրա հիմնված կրթական համակարգը, ազգային մշակույթի և գիտության զարգացման համար ստեղծված պայմանները: Ինչպես ցույց է տալիս Ադրբեջանի օրինակը, անկախ նրանից, թե ինչպիսին էին ԽՍՀՄ առաջնորդների հոչակած քաղաքական սկզբունքները, Խորհրդային Միության ղեկավարությունը որոշ հանրապետությունների քաղաքական վերնախավին հնարավորություն էր ընձեռել կենսագործելու ազգային քաղաքականության իրենց ուրույն տարբերակը: Մասնավորապես, դա արտահայտվում էր տիտղոսային էթնոսի համախմբման և ազգային փոքրամասնությունների ձուլման հարցերում:

Ադրբեջանում խորհրդային տարիներին տեղի ունեցող գործընթացներն ունեին ևս մեկ չափազանց կարևոր տեսանկյուն՝ թյուրքական էթնիկ

ծագում ունեցող մեծամասնության և ազգային փոքրամասնությունների միջև հարաբերությունները: Հիմնականում էթնիկ ադրբեջանցիներից կազմված հանրապետական իշխանությունների ձեռքով իրականացվող ազգային քաղաքականությունն Ադրբեջանում կարելի է բնորոշել իբրև ադրբեջանցիների ազգային համախմբման և էթնիկ փոքրամասնությունների ճնշման և ձուլման քաղաքականություն:

Այս քաղաքականության նպատակն էր ոչ միայն նպաստել ադրբեջանցիների ազգային ինքնագիտակցության զարգացմանը, այլև Ադրբեջանն ի վերջո դարձնել էթնիկապես միատարր պետություն: Հաշվի առնելով Խորհրդային Միությունում ազգային քաղաքականության վերը քննարկված առանձնահատկությունները՝ ակնհայտ է դառնում, որ ադրբեջանական քաղաքական վերնախավն ի վիճակի էր այդպիսի քաղաքական գիծն իրականացնել Խորհրդային Միության ղեկավարության լռելյայն համաձայնությամբ և աջակցությամբ:

Ադրբեջանում խորհրդային տարիներին ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվում էր ազգային խտրականության վրա հիմնված քաղաքականություն, որի նպատակն էր փոքրամասնությունների ձուլման կամ արտագաղթի միջոցով հասնել հանրապետությունում էթնիկ համասեռության: Հարկ է նշել, որ Ադրբեջանի մի շարք էթնիկ փոքրամասնություններ տեղի էին տալիս Բաքվի իշխանությունների ճնշմանը և որոշ չափով ընդգրկվում ադրբեջանական մեծամասնությանը ձուլվելու էթնիկ գործընթացներում: Դրանց թվին պատկանում են նախևառաջ մահմեդական դավանանք ունեցող էթնիկ խմբերը՝ քրդերը, թալիշները, պարսիկները և այլ խմբեր, որոնք դավանանքով և էթնոմշակութային այլ հատկանիշներով համեմատաբար մոտ էին ադրբեջանցիներին: 1921թ. տվյալներով՝ այդ էթնիկ խմբերը կազմել են Ադրբեջանի բնակչության 15%-ը կամ 266.7 հազար մարդ, և հաշվի առնելով նրանց աճի տեմպերը՝ այդ էթնիկ խմբերի թվաքանակը 1980-ականների սկզբին պետք է անցներ մեկ միլիոնից: Սակայն 1979թ. այդ բոլոր էթնիկ խմբերի թվաքանակը կազմում էր ընդամենը 57.1 հազար մարդ կամ 0.9%, և մարդահամարների արդյունքների հրապարակման ժամանակ դրանք ընդգրկվեցին «այլ ազգություններ» կարգում [15, c. 12-13]:

Միննույն ժամանակ, պետք է շեշտել, որ խորհրդային տարիներին անցկացված մարդահամարներում որոշ էթնիկ խմբեր արհեստականորեն միացվում էին ադրբեջանցիներին կամ դրանց քանակը կրճատվում էր: Մասնավորապես՝ այդպիսի նենգափոխումների ենթարկվեցին այնպիսի էթնիկ խմբերի վերաբերյալ տվյալները, ինչպիսիք են թալիշները, ինգիլոները (մահմեդական վրացիները), քրդերը, ծախուրները [16, c. 337]:

Այս առումով հետաքրքիր է Ադրբեջանի իրանալեզու էթնիկ փոքրա-

մասնությունների օրինակը: Այդ էթնիկ խմբերից ամենախոշորը Ադրբեջանի հարավ-արևելքում բնակվող թալիշներն են համարվում: Թեև թալիշները մահմեդական են և որոշ առումներով բավական մոտ են կանգնած ադրբեջանցի թյուրքերին, սակայն երկու ժողովուրդների միջև գոյություն ունեն հստակ էթնոմշակութային տարբերություններ, որոնք հիմք են ծառայում թալիշների ուրույն էթնիկ ինքնագիտակցության համար [17]:

Այս ինքնագիտակցությունն իր արտահայտությունն է գտել ինքնուրույն պետական միավոր ստեղծելու ձգտումների մեջ: Այժմյան Ադրբեջանի հարավ-արևելքում ուշ միջնադարում գոյություն է ունեցել Թալիշական խանությունը, որն այսօրվա թալիշ ազգային ակտիվիստները համարում են թալիշական ազգային պետականության առաջին պատմական փորձը: 1919թ. հռչակվեց Թալիշ-Մուղանյան հանրապետություն: Ազգային ինքնուրույն միավոր ստեղծելու այս փորձը ճնշվեց թուրքական զորքերի օգնությամբ: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո թալիշների շրջանում պահպանվում էին ինքնուրույն վարչական միավոր ստեղծելու ձգտումները: 1936-1938թթ. թալիշները դաժան բռնաճնշումների ենթարկվեցին. թալիշ ազգայնականներից շատերն արքայազններն էին, փակվեցին թալիշական դպրոցները, թալիշները զրկվեցին թալիշերեն լրատվության միջոցներից [13, p. 84]:

Թալիշների հանդեպ տարվող ազգային քաղաքականությունն իր արտահայտությունը գտավ նաև մարդահամարների տվյալներում: Այսպես, 1926թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ թալիշների թիվն Ադրբեջանում կազմում էր 77.3 հազար մարդ, այսինքն՝ Ադրբեջանի՝ այն ժամանակվա բնակչության 3.3%-ը: Իսկ ահա 1939թ. թալիշների հանդեպ իրականացված բռնաճնշումներից հետո նրանց թիվը, ըստ մարդահամարի տվյալների, կազմում է 3.3 հազար: Հետագա տարիների մարդահամարների ժամանակ «թալիշ» կատեգորիան ընդհանրապես բացակայում է: 1989թ. թալիշները վերստին ի հայտ են գալիս մարդահամարի տվյալներում. գրանցվում է 21 հազար թիվը: Վերջապես 1999թ. արդեն նշվում է 80 հազար թիվը [16, c. 350]: Հասկանալի է, որ այս բոլոր թվերն էլ քիչ կապ ունեն իրականության հետ. դրանք արտահայտում են թալիշների հանդեպ Բաքվի քաղաքականության փոփոխությունները: Մարդահամարից մարդահամար այսօրինակ խեղաթյուրումների էին ենթարկվում նաև այլ էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ տվյալները:

Իհարկե, մարդահամարի արդյունքների ամփոփման ժամանակ որևէ ազգային փոքրամասնության մասին տվյալների բացակայությունն ամենևին էլ չի նշանակում, որ այդ էթնիկ փոքրամասնությունն իրականում լիովին ձուլվել է մեծամասնության հետ: Այնուամենայնիվ, այդ հանգամանքը բավական խոսուն է. իշխանությունների կողմից մարդահամար անցկացնե-

լիս որոշակի էթնիկ խմբի անտեսումը վկայում է ձուլողական ակտիվ գործընթացների առկայության մասին:

Անշուշտ, վերը ներկայացված էթնիկ ձուլման պետական քաղաքականությունը հանդիպում էր էթնիկ փոքրամասնությունների դիմադրությանը [18]: Այդ քաղաքականության արդյունավետության աստիճանը նույնը չէր. յուրաքանչյուր ազգային փոքրամասնության դեպքում այդ գործընթացն ուներ իր առանձնահատկությունները: Հայերն այն ազգային փոքրամասնությունների թվին էին պատկանում, որոնք մեծ համառությամբ էին դիմադրում իշխանությունների կողմից իրականացվող ձուլողական քաղաքականությանը: Այդ հանգամանքը պայմանավորված էր, ի թիվս այլ գործոնների, էթնոմշակութային զգալի տարբերություններով կրոնի և հոգևոր մշակույթի, վարվելակերպի նորմերի, արժեքային համակարգի, կենցաղի ուրրտներում [19]: Չնայած Բաքվի ձուլողական քաղաքականությանը՝ հայերի ձուլման աստիճանը շարունակում էր աննշան մնալ, իսկ միջէթնիկ դիստանցիան հայերի և ադրբեջանցիների միջև բավական զգալի էր: Միջէթնիկ դիստանցիայի կարևոր ցուցանիշ է խառն ամուսնությունների թվաքանակը: Լեռնային Ղարաբաղի հայերի շրջանում գերակշռում էին մենէթնիկ ամուսնությունները, իսկ խառն ամուսնությունների մեջ գերակշռում էին ամուսնությունները ռուսների հետ: Հայ-ռուսական ամուսնությունները շատ ավելի հաճախադեպ էին, քան հայ-ադրբեջանական խառն ամուսնությունները, թեև ռուսները Լեռնային Ղարաբաղում ավելի քիչ էին, քան ադրբեջանցիները [19, c. 52]:

Խորհրդային տարիներին Ադրբեջանի ղեկավարությունը Ղարաբաղի հայության հանդեպ վարում էր մի քաղաքականություն, որը հիմնված էր բացահայտ խտրականության վրա [տե՛ս 20]: Քանի որ հայերի ձուլման գործում Ադրբեջանի քաղաքական վերնախավը գրեթե անհաղթահարելի խոչընդոտների էր հանդիպում, հայերի հանդեպ այլ մոտեցում էր որդեգրվել: Նպատակ էր դրվում ոչ թե ձուլման ենթարկել հայերին, այլ, նպաստելով հայերի արտագաղթին, ազատվել Լեռնային Ղարաբաղում և Նախիջևանում ապրող հայ բնակչությունից: Հիմնական շեշտը դրվում էր այդ շրջաններում հայերի և ադրբեջանցիների միջև ժողովրդագրական հարաբերակցությունը փոխելու վրա [21]:

Քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային տարաբնույթ ճնշումներն անբարենպաստ իրադրություն էին ստեղծում Լեռնային Ղարաբաղի հայերի համար և շատերին ստիպում հեռանալ երկրամասից՝ մեծ մասամբ դեպի Հայաստան կամ Ռուսաստան: Ամեն կերպ խրախուսվում էր նաև երիտասարդ հայերի արտագաղթը Ղարաբաղից դեպի Ադրբեջանի արդյունաբերական շրջաններ [22, c. 77]: Օգտագործելով պլանային

տնտեսության առանձնահատկությունները՝ Բաքուն գիտակցաբար արգելակում էր Ղարաբաղի տնտեսական զարգացումը, ստեղծում սոցիալական ծանր պայմաններ: Երկրամասի տնտեսությունը շարունակում էր հետամնաց, ագրարային բնույթ կրել, արդյունաբերական ձեռնարկությունները քիչ էին, իսկ եղածները հիմնականում վերամշակում էին հումքը, որից հետո այն հետագա մշակման էր ենթարկվում Ադրբեջանի ձեռնարկություններում: Բնակչության մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումները ԼՂԻՄ-ում շատ ավելի համեստ էին համաադրբեջանական ցուցանիշների համեմատ: Այսպես, 1950-ական թթ. ԼՂԻՄ այդ ցուցանիշը տասն անգամ ավելի ցածր էր համաադրբեջանականից [23, c. 45-59]:

Կադրային քաղաքականությունը խստորեն վերահսկվում էր Բաքվի կողմից. անգամ բուժքրոջ նշանակման համար պետք է լիներ Բաքվի վերահաս մարմինների համաձայնությունը: Իրականացվող կադրային քաղաքականությունը նպատակ էր հետապնդում Ղարաբաղից դուրս մղել հայ մտավորականությանը. բարձրագույն կրթություն ստացած դարաբաղցիները, հատկապես էթե այդ կրթությունը նրանք ստացել էին Հայաստանում, որպես կանոն, կամ պետք է հեռանային երկրամասից, կամ կատարեին ցածր որակավորում պահանջող աշխատանք, կամ էլ դառնային ադրբեջանական իշխանության հակահայկական գծի իրականացնողներ [20, c. 36-37]: Լեռնային Ղարաբաղի իրավապահ մարմիններում նախապատվությունը տրվում էր ադրբեջանցիներին, ընդ որում՝ մեծ թիվ էին կազմում Ադրբեջանի այլ շրջաններից եկածները: Այդ պայմաններում հայերի անձնական անվտանգությունն ապահովված չէր. հանցագործությունները հաճախ մնում էին չբացահայտված, էթե դրանք կատարվում էին հայերի դեմ՝ ադրբեջանցիների կողմից: Մյուս կողմից, իրավապահ մարմինների կամայականությունները հայ բնակչության հանդեպ սովորական երևույթ էին դարձել [20, c. 38-39]:

Այս քաղաքականությունն իր արտահայտությունն էր գտնում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացներում: 1926թ. Լեռնային Ղարաբաղի ընդհանուր բնակչությունը կազմում էր 125.300 մարդ, իսկ 1979թ.՝ 162.200 մարդ: Ընդ որում՝ հայ բնակչությունը 1926թ. կազմում էր 111.700 մարդ, իսկ 1979թ.՝ 123.100 հազար մարդ: Այսպիսով, հայ բնակչությունը երկրամասում շուրջ 60 տարվա մեջ աճել էր ընդամենը 11.400-ով, այսինքն՝ 1.1 անգամ: Հայերի բաժինը Լեռնային Ղարաբաղի բնակչության մեջ այդ ընթացքում 94.4%-ից իջել էր 75.9%-ի: Ինչ վերաբերում է ադրբեջանական բնակչությանը, ապա 1926-1979թթ. ընթացքում այն 12.600-ից հասել էր մինչև 37.200, այսինքն՝ մեծացել էր շուրջ 3 անգամ: Անգամ էթե քննենք 1921-1926թթ. ընդամենը հինգ տարվա ընթացքում տեղի

ունեցած ժողովրդագրական փոփոխությունները, ապա պատկերը բավական պերճախոս կլինի: Այդ հինգ տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը կրճատվեց 10.7 հազարով, իսկ թաթարական բնակչությունն աճեց 6.5 հազարից մինչև 12.6 հազարի, այսինքն՝ գրեթե կրկնապատկվեց: Ադրբեջանցիների տոկոսը, համապատասխանաբար, Լեռնային Ղարաբաղի ընդհանուր բնակչության մեջ աճեց 10.1%-ից (1926թ.) մինչև 22.9% (1979թ.): Աղյուսակը, որը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի բնակչության պատկերն ըստ ԽՍՀՄ-ում 1926-1979թթ. անցկացված մարդահամարների, կօգնի ավելի ճշգրիտ պատկերացում կազմել Լեռնային Ղարաբաղի բնակչության շարժի մասին [թվական տվյալները ներկայացված են հազարներով, տվյալների աղբյուրները՝ 15, 24]:

	1921	1926	1939	1959	1970	1979
Ամբողջ բնակչությունը	129.3	125.3	150.8	130.4	150.3	162.2
հայեր	122.4	111.7	132.8	110.1	121.1	123.1
ադրբեջանցիներ	6.5	12.6	14.1	18.0	27.2	37.2
ռուսներ	0.2	0.6	3.2	1.8	1.3	1.3
այլ ազգություններ	-	0.4	0.7	0.5	0.7	0.6

Խորհրդային ամբողջատիրության պայմաններում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը, փաստորեն, զրկված էր Բաքվի քաղաքականությանը դիմակայելու որևէ լծակից: Այնուամենայնիվ, Ադրբեջանի կազմի մեջ գտնվելու առաջին իսկ տարիներից Ղարաբաղի հայ բնակչության շրջանում ուժեղ էր Խորհրդային Հայաստանին միանալու ցանկությունը, որն արձագանք էր գտնում նաև Հայաստանում: Սակայն 1920-30-ական թթ.՝ ստալինյան բռնաճնշումների ժամանակաշրջանում, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միավորման մասին ցանկացած ակնարկ կարող էր դիտվել որպես ազգայնականության արտահայտություն և բանտարկության կամ աքսորի պատճառ դառնալ: Այնուամենայնիվ, անգամ հետպատերազմյան տարիներին փորձ արվեց բարձրացնել Լեռնային Ղարաբաղի հարցը, ընդ որում՝ այդ փորձը ձեռնարկվեց Հայաստանի ղեկավարության կողմից: 1945թ. նոյեմբերին ՀԽՍՀ կոմկուսի առաջին քարտուղար Հարությունովը դիմում է Ստալինին՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու խնդրանքով [25, էջ 182-184]:

Այդ դիմումը մերժում ստացավ, սակայն Հայաստանի կոմկուսի առաջնորդները հետագա տարիներին ևս պարբերաբար նման դիմումներ էին հղում Մոսկվա: Խրուշչովյան «ձնհալի» շրջանում, երբ ամբողջատիրական համակարգի ճնշումը թուլացավ, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միավորման պահանջներով սկսեցին հանդես գալ ԼՂԻՄ հայության լայն

շրջանակներ: Այսպես, 1963թ. Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու խնդրանքով նամակ հղվեց Խրուշչովին, ընդ որում՝ նամակը ստորագրել էին շուրջ 2500 մարդ: 1965թ. այդօրինակ նամակը ստորագրել էին արդեն 45.000 մարդ: Նույն 1965թ. Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին միավորելու պահանջներ էին առաջ քաշվում նաև Հայաստանում 1965թ. ապրիլի 24-ի հայտնի երթի մասնակիցների կողմից: 1977թ., ԽՍՀՄ սահմանադրության քննարկման հետ կապված, դարձյալ փորձ արվեց բարձրացնել Ղարաբաղի հարցը [20, c. 41]: Ադրբեջանական ղեկավարությունը, հասկանալի է, ամեն ինչ անում էր Ղարաբաղի հարցը բարձրացնելու փորձերը ձախողելու համար: Այսպես, 1965թ., երբ հասարակական ակտիվությունը Լեռնային Ղարաբաղում մեծ չափեր էր ընդունել, այստեղ իրականացվեցին բռնաճնշումներ տեղի հայ մտավորականության հանդեպ [20, c. 41-43]: Թե ինչպիսի արդյունքների, ի վերջո, հանգեցրեց այս քաղաքականությունը, քաջ հայտնի է: Երբ ԽՍՀՄ-ում սկսվեցին «վերակառուցման» գործընթացները, Լեռնային Ղարաբաղում սկսեց թափ առնել հուժկու ազգային շարժում:

*Նոյեմբեր, 2007թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Тишков В.*, Национальности и национализм в постсоветском пространстве // Этничность и власть в полиэтничных государствах, М., 1994, с. 9-34.
2. *Slezkine Y.*, The USSR as a Communal Apartment or How a Socialist State Promoted Ethnic Particularism in G. Elley and R.G. Suny. *Becoming National: a Reader.* Oxford, New York, 1996, pp. 203-239.
3. *Smith J.*, The Bolsheviks and the National Question, 1917-1923. London, 1999.
4. *Bremmer I.*, Post-Soviet Nationality Theory: Past, Present, and Future, in Bremmer I., *Tarras R.* (ed), *Nations & Politics in the Soviet Successor States.* Cambridge University Press, 1997, pp. 3-29.
5. *Suny R.*, The Revenge of the Past. Nationalism, Revolution and the Collapse of the Soviet Union. Stanford, Stanford University Press, 1993.
6. *Գելներ Է.*, Ազգերը և ազգայնականությունը, Երևան, 2003:
7. *Gellner E.*, Nationalism, New York, Weidenfeld & Nicolson, 1997.
8. *Свентоховский Т.*, Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане // *Азербайджан и Россия: общество и государства, Москва, 2001:*
9. *Shaffer B.*, Borders and Brethren: Iran and the Challenge of Azerbaijani Identity. The MIT Press, Cambridge, Massachusetts - London, England, 2002.



10. *Сталин И.*, Сочинения, т. 2, М., 1952.
11. *Altstadt A.*, The Azerbaijani Turks: Power and Identity Under Russian Rule. Stanford: Hoover Institution Press, 1992.
12. *Аух Е-М.*, Между приспособлением и самоутверждением. Ранний этап поисков национальной идентичности в среде мусульманской интеллигенции и возникновение нового общества на юго-восточном Кавказе (1875-1905) // Азербайджан и Россия: общества и государства, М., 2001, с. 51-75.
13. *Shnirelman V.*, The Value of the Past: Myths. Identity and Politics in Transcaucasia. Osaka, 2001.
14. *Nahaylo B., Swoboda V.*, The Soviet Disunion: a History of Nationalities Problem in the USSR. London, 1990.
15. *Мирзоян Б.*, Нагорный Карабах (размышления над статистикой) // Правда о Нагорном Карабахе (материалы и доклады), Ереван, 1989.
16. *Мусабеков Р.*, Становление азербайджанского государства и этнические меньшинства // «Азербайджан и Россия: общества и государства», М., 2001, с. 337-363.
17. *Чурсин Г.*, Тальши (этнографические заметки) // Известия кавказского историко-археологического общества, Тифлис, т. 4, с. 15-45.
18. *Асатрян Г., Геворкян Н.*, Азербайджан: принцип присвоения и иранский мир, Ереван, 1990.
19. *Марутян А., Саркисян Г., Харатян З.*, К этнокультурной характеристике Арцаха // Правда о Нагорном Карабахе (материалы и доклады), Ереван, 1989.
20. *Золян С.*, Нагорный Карабах: проблема и конфликт, Ереван, 2001.
21. *Оганджян Р.*, Межнациональные отношения и миграция, Вестник общественных наук, #11, Ереван, 1989.
22. Нагорно-Карабахская Республика: путь к вершинам, Степанакерт, 2001.
23. Нагорный Карабах: историческая справка, Ереван, 1988.
24. *Карапетян М.*, Этническая структура населения Нагорного Карабаха в 1921г., Ереван, 1991.
25. *Ուլմրիշյան Բ.*, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, հ. Ա, Երևան, 1997:

## НАЦИОНАЛЬНАЯ ПОЛИТИКА В СОВЕТСКОМ АЗЕРБАЙДЖАНЕ И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА

*Микаэл Золян*

Резюме

С точки зрения исследования причин возникновения карабахского конфликта, важнейшее значение имеет вопрос о том, в какой мере он был обусловлен спецификой национальной политики, проводившейся в советские годы. Во-

преки существующим представлениям, советская национальная политика была сложной, многогранной и противоречивой. В ней сочетались такие, казалось бы, несочетаемые явления, как «социалистический интернационализм» и подавление национальных движений с одной стороны, и следование «националистическому» (в понимании Эрнеста Геллнера) принципу совпадения границ политической и культурной единицы – с другой.

Административно-территориальная структура СССР была построена по иерархическому принципу: на вершине иерархической пирамиды находился союзный центр, на следующих ступенях иерархии находились союзные республики, каждая из которых имела свою «титულную национальность», а на более низких ступенях – автономные образования: автономные республики, области и округа, которые также в большинстве случаев создавались по этническому принципу. Такая система приводила к возникновению противоречий не только между союзным центром и союзными республиками, но и между «титულным» этносом и этническими меньшинствами внутри союзных республик.

Яркий пример подобных противоречий – процессы, протекавшие в советский период в Азербайджанской ССР. С одной стороны, проводилась политика консолидации титульного этноса – азербайджанцев, и формирования азербайджанской этнократической элиты, которая постепенно занимает лидирующие позиции в республике. С другой – проводилась политика ассимиляции по отношению к национальным меньшинствам республики. Среди этнических меньшинств, по культуре и религии относительно близких к азербайджанцам, она могла иметь определенный успех. Совершенно иная ситуация существовала в отношениях между армянами Нагорного Карабаха и республиканским руководством. Поскольку этническая ассимиляция армян представлялась невозможной; различными способами поощрялись миграционные процессы, которые должны были привести к изменению демографического баланса между армянами и азербайджанцами. Такая политика встречала упорное сопротивление среди армянского населения Нагорного Карабаха, которое выражалось, в частности, в требованиях вывести регион из состава Азербайджанской ССР. В значительной степени именно эти процессы подготовили события 1988г.